

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Լուծալ»-ի ընթերցողներին ծանօթ է արդէն, որ Խորիմեան Հայրիկի առ տէր փոխուելով Հայաստանեայց Մայր Աթոռ թափուր մնաց և կաթողիկոսական նոր ընտրութիւն նշանակուեց անցեալ հոկտեմբերի 30-ին:

Չնայելով, որ ընտրական հրաւիրազրերը Էջմիածնի սինօդը իւր ժամանակին ուղարկեց ներքին գործերի նախարարութեան, որ, ըստ պալատէնիայի Կ. Պօլսի ռուսական դեսպանի միջոցով ուղարկուած է Տանկահայ թեմերին, այնուամենայնիւ հրաւիրազրերը բաւական ուշ տեղ հասան, այնպէս որ տանկահայ թեմերում պատգամաւորական ընտրութիւնները կատարուեցին շատ հապճեպ կերպով և շատերն իսկ ստիպուած եղան պատգամաւորներ նշանակել մեր կողմերից հեռադիրներով, որպէս զի ժայնի իրաւունքից զրկուած չմնան:

Այս ուշացնելու պատճառը, ինչպէս վերջը պարզուեց այն էր, որ ռուս կառավարութիւնը դիտաւորութիւն էր ունեցել կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգել, մինչև որ Հայոց եկեղեցու կառավարութեան վերաբերեալ նոր կանոններ մշակէ, բայց վերջը լսելով Կովկասեան Փոխարքայի հակառակ կարծիքն այդ մասին՝ փոխել էր իւր դիտաւորութիւնը:

Սինօդը այս խնդրում մի զեղծում գործեց. Կիլիկիոյ 7 թեմերից 7 հոգևոր և 7 աշխարհական պատգամաւոր հրաւիրելու փոխարէն միմիայն մի հոգևորի և մի աշխարհականի

հրաւիրադրեր ուղարկեց, որի դէմ ոչ միայն բողոքեց տեղւոյս մամուլը, այլ որ գլխաւորն է բողոքեց ինքը Երիւկիոյ կաթողիկոսը և նոյն իսկ չմասնակցեց կաթողիկոսական ընտրութեան: Այս խնդիրը մնաց առ կախ, որովհետեւ Էջմիածնի Համագումարը ուշադրութեան առարկայ չդարձրեց այս կարևոր խնդիրը, մինչև դա ազգային լրութեան տեսակէտով կարևորագոյն խընդիրներէց մէկն է և առաջիկայում կարող է շօշափելի տարածայնութիւնների առիթ լինել:

Հոկտեմբերի 25-ին արդէն գրեթէ ամեն կողմերէց ժողովուել էին հողւորական և աշխարհական պատգամաւորները:

Մամուլի, ինչպէս նաև պատգամաւորների մէջ երկու խոշոր հատուածներ կային: Մի մասը իրանց ընտրելի ներկայացնում էին Ամեն. Իզմիրլեան սրբազանին և Դուրեան եպիսկոպոսին, իսկ միւսը դարձեալ Իզմիրլեան սրբազանին և Օրմանեան արքեպիսկոպոսին:

Վերջին ամիսների Տանկաստանում տեղի ունեցած կառավարական եղանակի փոփոխութեան պատճառով հրաժարուած էր Օրմանեան պատրիարքը, ուստի և նորա թեկնածութեան հաւանականութիւնը յայտնի չափով նուազել էր, և այս իսկ պատճառով վերոյիշեալ երկու հատուածների մէջ պայքարը շատ մեծ չափով տեղի ունեցաւ:

Տանկաստան պատգամաւորները, ազատութեան հովերին սիրահար, հեռացել էին Օրմանեանից, իբրև միմիայն կուլտուրական զարգացման հետևող անձից, և դեռ Էջմիածին չհասած, Վոսպորի ամերից դէպի մեզ լողացող շոգենաւի վերայ արդէն կատարել էին իրանց նախնական որոշումը:

Նոյեմբերի 1-ի Համագումարը սրբազործեց այդ որոշումը և Մայր տաճարում ընտրութիւն կատարելով ամենայն Հայոց կաթողիկոսական ընտրեալ հռչակեց ամեն. Տ. Մատթէոս եպս. Իզմիրլեանին 73 ձայնով և նորան կանգիդատ Տ. Եղիշէ եպս. Դուրեանին 55 ձայնով:

Օրհնեալ է Աստուած, Հայաստանեայց առաքելական եկեղեցին շուտով կպատուէ իւր սգոյ քօղը և նորընտիր վեհ. կաթողիկոսը ժամանելով Ե. Էջմիածին՝ կմատչի ի հովուութիւն Հայաստան ժողովրդոց: